ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 մայիսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

68
(2918)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն հարցաքննության է հրավիրել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանին, սակայն վերջինս չի ներկայացել քննչական կոմիտե՝ նշելով, որ ծանրաբեռնված է ու չի կարող ներկայանալ:

Նշենք, որ ՀՀ քննչական կոմիտեն քրեական գործ է հարուցել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանին բռնության ենթարկելու դեպքով:

Տեղեկացնենք, որ Գլխավոր դատախազությանը հանցագործության մասին հաղորդում էր ներկայացրել Արթուր Խաչատրյանը եւ հայտնել. «Ինչպես հավանաբար տեղյակ եք, ուրբաթ օրը՝ապրիլի 27-ին, Երեւան-Սեւան մայրուղու Հրազդանի հատվածից մի խումբ ոստիկաններ, առանց որեւէ օրինական պահանջ ներկայացնելու, թեժացնելով եւ սադրելով լարված իրավիճակը՝ իմ նկատմամբ բռնություն են կիրառել, ապօրինաբար զրկել են ազատությունից եւ ոստիկանական մեքենայով, չորս ոստիկանի ուղեկցությամբ տեղափոխել են Կոտայքի մարզի Հրազդանի ոստիկանական բաժանմունք: Հրաման տվողն ու քաշքշուկ հրահրողը ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ Ռուբեն Դավթյանն էր:

Վստահ եմ, որ հատկապես Ռ. Դավթյանը քաջատեղյակ էր, որ ես ԱԺ պատգամավոր եմ: Ի դեպ, Դավթյանը քաղաքացիական հագուստով էր եւ չէր ներկայացել: Ճանապարհին ես իմ զարմանքն ու ընդվզումն էի արտահայտում, հատկապես պայմանավորված այն հանգամանքով, որ իրենք իրավունք չունեն ԱԺ պատգամավորին ազատությունից զրկելու եւ բերման ենթարկելու, սակայն ինձ չէին արձագանքում: Արդեն բաժանմունքում ինձ տեղեկացրին, որ ես բերման չեմ ենթարկվել: Խոսքերն ավելորդ են:

Այն, ինչ տեղի ունեցավ ուրբաթ օրը, «ոստիկանապետության» ամենացցուն դրսեւորումն էր: Փաստորեն, Հայաստանում ոստիկանն իրեն օրենքից վեր է դասում, իրեն իրավունք է տալիս՝ խախտելու երկրի Սահմանադրությունը: Հույս ունեմ, որ հանցագործությունն անպատիժ չի մնա: Այլապես, այսօրվա իշխանություններին էլ ավելի բարդ կլինի հերքել, որ ոստիկանական ապօրինությունները կատարվում են իրենց անմիջական հրամանով»,- գրել էր պատգամավորը:



Իշխանության ներսում անհանգստություններն այլեւս անցել են, ՔՊ-ում վստահ են՝այս պահին իրենց իշխանությանը վտանգ չի սպառնում: Բանն այն է, որ վերջին օրերին անհնազանդության ակցիաների ու հանրահավաքների դադարը ուրախացրել է ՔՊ-ին: Իշխանականները հույսը դրել են այն բանի վրա, որ եթե անգամ անհնազանդության ակցիաները վերսկսվեն, դրանք այլեւս այն մեծ թափով չեն լինի, ինչ շարժման առաջին օրերին: Ներքին քննարկումներում էլ նրանց մեծ մասը կարծիք է հայտնել, որ անհանգստանալ պետք չէ. «վտանգն» այլեւս անցել է, մարդիկ էլ չեն հավաքվի: Հենց սրանով պայմանավորված էլ՝վերջին օրերին իշխանականները կրկին ակտիվացել են ու խորհրդարանում ավելի «խրոխտ» ելույթներ են ունենում, ծաղրում Սրբազանին:

Դեռ 2023 թվականի տարեսկզբին մամուլը գրել էր՝ «Ներքին գործերի փոխնախարար Դավիթ Համբարյանը չի հայտարարագրել իր բաժնեմասը»: Հոդվածում մասնավորապես ասվում էր, որ Դավիթ Համբարյանը չի հայտարարագրել մասնավոր ընկերությունում իր ունեցած բաժնեմասը: 2018 թվականի սեպտեմբերի 18-ին Դ. Համբարյանը Վանաձորում հիմնադրել է «Դ-Արտ» ՍՊԸ-ն, որի 50 տոկոս բաժնեմասը պատկանում է հենց իրեն: Պետեկամուտների կոմիտեի տվյալներով՝ այդ ընկերությունը զբաղվում է արագ սննդի ծառայություններով: Թեպետ ընկերության գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է, Համբարյանը պարտավոր էր իր հայտարարագրում նշել այդ բաժնեմասը: Այս հրապարակման հանգամանքները քննության էր առել նաեւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Հանձնաժողովը որոշել էր իրականացնել Դավիթ Համբարյանի եւ նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն: Եվ ահա, վերլուծության արդյունքում՝ արձանագրված պարզաբանման ենթակա հարցերի եւ անհամապատասխանությունների վերաբերյալ Հանձնաժողովը Դավիթ Համբարյանից եւ նրա կնոջից հայցել է պարզաբանումներ: Ստացված պարզաբանումների գնահատման արդյունքում՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ իրենց իսկ կասկածներն այդ պարզաբանումներից «փարատվել» են: Այսպիսով՝ Համբարյանին թույլ են տվել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարել, իսկ կնոջ՝ Էմմա Խաչատրյանի մասով նախաձեռնել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

«Ժողովուրդ» օրաթերթը անդրադարձել էր Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի (ԱՆԻՖ) հերթական ձախողված պրոյեկտ «Ֆլայ Արնա»-ին, որի 49 տոկոս բաժնետերը «Էյր Արաբիա»-ն է: Ըստ իշխանական մամուլի՝ «Ֆլայ Արնա» ավիաընկերությանը բյուջեից՝ ԱՆԻՖ-ի խողովակներով ուղղվել էին միլիարդավոր դրամներ (օրինակ՝ 28.12.2023թ. ԱՆԻՖ-ին տրամադրած 1.8 միլիարդի մի մասը եւ այլ նման երեւույթներ), ինչի արդյունքում ո՛չ գումարը կա, ո՛չ՝ ավիաընկերությունը: Բայց, քանի որ ցանկացած տնտեսական ձախողման դեպքում լինում են պարտատերեր, ապա «Ֆլայ Արնա»-ում գտնվել է «հանճարեղ» միջոց. նրա հետ «բոլոր հարցերը» հասցեագրվել են Պորտուգալիայի հյուպատոսին, որին պատկանում է «Սիդոն թրավելը»:

Հ.Գ. Նույնիսկ «չարագործ» Սաշիկի մտքով նախկինում չէր անցնի որեւէ պարտք перевод անել դիվանագետների վրա:

ԶՐՈՒՅՑ

ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ ԲԱՎԱԿԱՆԻՆ ՄԵԾ ԵՆ

Երեկ «Անի Գրանդ» հյուրանոցում Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը հանդիպում է ունեցել Արցախի կառավարության անդամների, ԱԺ պատգամավորների եւ համայնքի ղեկավարների հետ:

Հանդիպման մի մասն անցել է դռնփակ կերպով:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի ԱԺ փոխնախագահ Գագիկ Բաղունցի հետ: Անդրադարձել ենք սպասվող հանրահավաքին, դրանից ակնկալիքներին եւ արդի այլ հարցերի:

-Բագրատ սրբազանն ասել է, որ հնարավոր է Ոսկեպարով վերադարձ՝ Արցախ: Այս միտքը իրատեսական համարո՞ւմ եք:

-Իմ երիտասարդության տարիները համընկել են Արցախյան շարժման հետ, որից հետո մի քանի տարի ծառայել եմ Արցախի բանակում, ընդհուպ՝ գունդ եմ ղեկավարել, եւ ամբողջ կյանքս համարել եմ, որ պայքարում եմ Արցախի անկախության, Արցախը հայկական պահելու համար, ինչը ողջ հայության խնդիրների միայն մի մասն է: Անկախ նրանից, թե ինչ ճակատում ենք պայքարում, մեր համար մեկ խնդիրը պիտի լինի ողջ հայության հարցը՝ անկախ ճակատից: Յուրաքանչյուրը պիտի իր պատասխանատվության բաժինն ունենա հայ ազգի ճակատագրում:

-Պարոն Բաղունց, իշխանության ներկայացուցիչները հաճախ ծաղրով են վերաբերվում այս շարժմանը: Ասում են, որ իմպիչմենտն անհնար է, եւ չեն հրաժարվելու իշխանությունից: Ասում են, որ շարժումը հնարավոր է՝ մարի:

-Ամեն մարդու, հատկապես՝ պայքարի մեջ մտած մարդու համար, դատավոր պիտի լինի իր խիղճն ու Աստված. թե ով կողքից ինչ կխոսի, էական չէ, թող ինքն իր գործով ապացուցի, որ հայանպաստ գործունեությամբ է զբաղվում:

-Բագրատ սրբազանն ասել է, որ կիրակի օրը մեծ հանրահավաք է լինելու, եւ հրապարակվելու է հստակ գործողությունների ծրագիր: Ըստ Ձեզ՝ ի՞նչ է սպասվում:

-Իրենից պիտի ճշտեք: Նախ՝ չեմ տիրապետում բոլոր մանրամասներին, եւ հետո՝ իրավասու չեմ ներկայացնել: Հնարավոր է՝ քայլեր կան, որոնց մասին այս պահին խոսելը ճիշտ չի լինի:

-Իսկ դուք ի՞նչ սպասելիքներ ունեք հանրահավաքից:

-Սպասելիքները մեծ են Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության անվտանգության ապահովման, հայության հավաքական՝ Արցախ վերադարձի հարցում, ինչը յուրաքանչյուր հայի պիտի մտահոգի. խնդիրներ շատ կան: Յուրաքանչյուրս պիտի ներդրում ունենա, որպեսզի հետ չմնանք, քանի որ հետ մնալը անվտանգության թուլացման հիմքն է: Մենք տեսնում ենք, թե ինչպես են տնտեսության զարգացման հետ մեկտեղ բազմաթիվ երկրներ հասնում մի կետի, երբ իրենց դերակատարությունը կրկին աճում է, եւ իրենք են թելադրում: Ականատեսն եք մեր հարեւան պետության ղեկավարի՝ սպառնալիքներով լի հայտարարություններին, եւ դրա հիմքում այն է, որ մենք ազգովի վերջին 30 տարիների ընթացքում ոչինչ չարեցինք, որ մեզ հետ ուժի սպառնալիքների տեսանկյունից չխոսեն, եւ այժմ դրա դասերն ենք քաղում՝ թեկուզ ժամանակավորապես, սակայն կորցնելով Արցախը: Համախմբման շնորհիվ պետք է հասնենք թե՛ Հայաստանի Հանրապետության, թե՛ հայկական աշխարհի ամրապնդմանը, որպեսզի մեզ հետ ուժի սպառնալիքով խոսակցություններ չվարեն:

Նշենք, որ երեկ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման ղեկավար Բագրատ սրբազանը հանդիպել է Արցախի քաղաքական եւ պետական ղեկավարության հետ:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 211

ՄԱՐԴԻԿ, ՄԻԵՎՆՈՒՅՆՆ Է, ԹՇՎԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՆ

Հայաստանի Հանրապետության հրապարակում 01.05.2018թ., ելույթ ունենալով՝ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է. «Հայաստանը պետք է ջնջի իր երեսին դաջված ամենաամոթալի խարանը՝ շուրջ 30 տոկոսանոց աղքատությունը, որը երկար տարիներ մեր ժողովրդին զրկում է աղագայից ու հայրենիքից»:



21.11.2018թ. Նիկոլ Փաշինյանը հայտարարում էր. «Իմ խորին համոզմամբ՝ երկար տարիներ ՀՀ-ում խրախուսվել է աղքատությունը, քանի որ գործող քաղաքական համակարգին ձեռնտու է եղել, որ մարդիկ լինեն աղքատ, քանի որ աղքատ մարդկանց ընտրակաշառքով շատ ավելի հեշտ է ուղղորդել կոնկրետ ընտրության: Մենք ուզում ենք, որ ՀՀ-ում լինեն հարուստ մարդիկ»:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է իրական պատկեր:

Աղքատության թվային պատկերը հետեւյալն է՝

- 2018թ. - 23.5%
- 2019թ. - 26.4%
- 2020թ. - 27%
- 2021թ. - 24.8%
- 2022թ. - 24.8 %

2023 թվականի ցուցանիշը դեռ հրապարակված չէ:

Աղքատության մակարդակը, ըստ աղքատության վերին գծի, հետեւյալն է՝

- 2019թ. - 43,8%
- 2020թ. - 47,6%
- 2021թ. - 45,7%
- 2022թ. - 41,3%

Ծայրահեղ աղքատությունը 2022թ. կազմում է 1.2 տոկոս, այնինչ Նիկոլ Փաշինյանը խոստանում էր վերացնել:

Ի՞ՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ Հ. ԱՍԼԱՆՅԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հակոբ Ասլանյանի՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացրած պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագիրը:

Այսպիսով՝ պարզ դարձավ, որ Հակոբ Ասլանյանը Ազգային ժողովի աշխատակազմից որպես աշխատանքի վարձատրություն ստանում է տարեկան 10 մլն 751 հազար դրամ: Ասլանյանը ֆինանսական միջոցներ է ստանում ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից, որպես կենսաթոշակ, տարեկան 825 հազար դրամ. այն ամսական կազմում է գրեթե 68 հազար դրամ: Ասլանյանի կանխիկ դրամական միջոցները կազմել են 1 մլն դրամ, բանկային ավանդները՝ 1 մլն դրամ եւ 6 հազար ԱՄՆ դոլար՝նախորդ տարվա համեմատ ավելանալով գրեթե 3 հազար ԱՄՆ դոլարով:

Ասլանյանը, համեմատած մյուս ՔՊ-ականների, համեստ կյանքով է ապրում: Պատգամավորն ունի 1 բնակարան Երեւանում՝ ձեռք բերված դեռ 1986 թվականի հուլիսի 1-ին, նույն բնակարանի համասեփականատեր է նաեւ պատգամավորի կինը՝ Ալվարդ Խաչատրյանը:

Բնակարանը, որը գտնվում է Նոր Նորք վարչական շրջանում, նախորդ տարվա հայտարարագրում ձեռք էր բերվել 1987 թվականի օգոստոսի 28-ին: Սա վրիպակ է, թե սխալմունք՝չենք կարող ասել:

Պատգամավորի ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 400 հազար դրամ:

Ասլանյանի կնոջ բանկային ավանդները կազմել են 1 մլն 200 հազար դրամ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 500 հազար դրամ, հաշվետու տարվա եկամուտները կազմել են 612 հազար դրամ, որը կենսաթոշակ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից: Կնոջ բանկային ավանդները 2022 թվականից հետո ավելացել են, եւ 2023 թվականին՝ զրոյից դարձել 1 մլն 200 հազար դրամ:

Հիշեցնենք, որ ապրիլի 15-ին հանրային տրանսպորտում երիտասարդ Սամվել Վարդանյանը, տեսնելով ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հակոբ Ասլանյանին, նրան թիրախավորել էր՝ անվանելով «ժեխ բիձա», «դավաճան»: Դեպքից հետո նրան ձերբակալեցին, իսկ քննչականից ձերբակալվածների պահման վայր տեղափոխելու ճանապարհին երիտասարդին դիմակավորված բանդան ծեծել էր, խոշտանգել, սեռական նվաստացման ենթարկել: Սկզբում Հակոբ Ասլանյանը ArmLur.am-ի հետ զրույցում նշել էր, որ Սամվել Վարդանյանի դեմ բողոք չի ներկայացնի, սակայն մեկ օր անց՝ ակնհայտ քաղաքական որոշման արդյունքում, կայացված որոշումից հետո Հակոբ Ասլանյանը հաղորդում ներկայացրեց Սամվել Վարդանյանի դեմ:

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ՝ Վ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ

Երեկ՝ մայիսի 21-ին, խորհրդարանում՝ լրագրողների հետ զրույցում, Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանը, պատասխանելով հարցին՝ ինչ կարծիք ունի խմբակցությունը Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի առաջնորդած՝ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մասին, ասաց. «Թե՛ խմբակցությունը, թե՛ քաղաքական թիմն առհասարակ, մշտապես քննարկում է ներքաղաքական, արտաքին քաղաքական իրավիճակը: Ռոբերտ Քոչարյանի հերթական քաղաքական պայքարը «սրբազան» կոչելն ինչքանո՞վ է օգնում այդ պայքարին. բայց եթե իմ տեսակետն եք ցանկանում լսել, խորհուրդ կտամ Քոչարյանի հերթական քաղաքական պայքարը «սրբազան» չանվանել: Դա ավելի շատ կոմիկ դաշտ է տեղափոխում այս ամենը»:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց շարժման աջակից, «Լուսավոր Հայաստան» կուսակցության կառավարման խորհրդի փոխնախագահ Դավիթ Խաժակյանի հետ՝ մեկնաբանություն ստանալու նպատակով. «Իշխանականները ինչքան ասես կարող են նման հայտարարություններով հանդես գալ, իմ՝ երեկ չէ առաջին օրը արած հայտարարությունում եմ ասել՝ եթե շարժումը տարանջատվի նախկին իշխանություններից, ապա միայն կշահի, իսկ մնացյալ բոլոր զազրախոսություններին, որոնք արվում են շարժման հասցեին, կարծում եմ իմաստ չունի ուշադրություն դարձնել»:

Նրա խոսքով՝ պետք է կենտրոնանալ շարժումը էլ ավելի մեծացնելու եւ հանրությունից էլ ավելի մեծ աջակցություն ստանալու վրա:

Վահագն Ալեքսանյանի՝ լրագրողներին տված նույն պատասխանին մեկ այլ արձագանք եւս հնչեց:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց շարժման աջակից երգիչ, երգահան, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ Դավիթ Ամալյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչպես է նա վերաբերվում այս հայտարարությանը, վերջինս պատասխանեց. «Իսկ եթե Վահագն Ալեքսանյանը վերջում տեսնի, որ Քոչարյանը չի, ի՞նչ է ասելու: Ինձ համար քիչ է հետաքրքիր Քոչարյանը կա, թե չկա, ես գիտեմ, որ չկա, գիտեմ, որ սրբազանն է. հարցը այն է, որ մենք ունենք ադրբեջանական իշխանություն, իրենց բլոգերները ադրբեջանական դրոշով են հանդես գալիս արդեն, Նատալի Ալեքսանյանը՝ նույն Վահագնի ազգանվանակից բլոգերը, իր հետեւի պատին Նիկոլ Փաշինյանի, Ալիեւի, իր եւ Ադրբեջանի ու Ուկրանիայի դրոշն է փակցրել, եթե իրենք չեն թաքցնում, որ ադրբեջանամետ են, ապա Քոչարյանը կապ ունի, թե չունի, ինձ չի հետաքրքրում. իսկ ես գիտեմ, որ չունի:

Ինձ հետաքրքիր է, երբ սրբազանը ի վերջո հայտարարի, որ վարչապետի թեկնածուն մի մարդ է, որը որեւէ կապ չունի Քոչարյանի հետ, այդ ժամանակ ի՞նչ է անելու»:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ԿԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Մեր այս շարժման բուն նպատակը իրական խաղաղություն ունենալն է՝ թե՛ մտքի, թե՛ ֆիզիկական:

Այս մասին արցախցի պատգամավորների ու կառավարության անդամների հետ հանդիպմանը ասել է Բագրատ Սրբազանը:

«Շատ ուղիղ եմ ասում՝ պատերազմը իրենք են բերել՝ իրենց ապաշնորհ լինելու պատճառով: Հիմա մենք շատ փխրուն ու անպատրաստ ենք ու ստիպված ենք լինում մեր հայրենիքը կտոր-կտոր, պատերազմի սպառնալիքի ներքո, ուղղակի զիջելու. թե հետո ինչ կլինի, դրա հետեւանքը, կարծես, ոչ մեկին չի հետաքրքրում:

Հարցի բարոյական մասը մեզ համար կրկնակի կարեւոր է: Գործընթացը սկսել է ստով, ու սուտը սկսել է դեռ 2018 թվականից, գիտենք, թե ստախոսն ով է, ստի արտաբերողն ով է: Այս ստի մշակույթը պետք է կանգնեցվի: Սա ավելի կարեւոր է, քան իրավական ու մնացած կետերը. սա ստի ու ճշմարտության պայքար է, այլընտրանք չկա. ճշմարտությունը պետք է հաղթի, եթե ուզում ենք կյանքի շարունակականություն ունենալ:

Հրապարակի վրա դրված տեսանյութը դեռեւս ոչ ոք չի հերքել, որովհետեւ մենք ճշմարությամբ խոսել ենք ստի մասին: Ես ամեն օր սպասելու եմ, որ ինչ-որ մեկը հերքի, բայց չեն հերքելու. այս շարժումը հաշտության մասին է, բայց ոչ ոք չկարծի, որ այդ հաշտությունը ենթադրում է լղոզված հարաբերություններ:

Հաշտության հիմքը եթե արդարությունը կամ արդարադատությունը չէ, այդ հաշտությունը իմաստ չունի: Մեր երկիրը պետք է մեղսալիցներից, մեղավոր հասարակությունից վերացվի ու դառնա արդարների հասարակություն: Հետեւաբար՝ հաշտության օրակարգը չի ենթադրում չարդարադատություն», - ասաց նա:

Անդրադառնալով Արցախի հարցին՝ Սրբազանն ասաց. «Մենք սխալվելու ենք այնքան ժամանակ, ինչքան Արցախի հարցը կառանձնացնենք ընդհանուր համահայկական փաթեթից: Արցախի հարցը ոչ մի բանով պակաս չէ Ցեղասպանության հարցից ու ավելին՝ Ցեղասպանության հետեւանքով առաջացած խնդիր է այն:

Այն չպետք է դառնա Արցախյան պատերազմ, Արցախյան հարց, պետք է դառնա հայրենական ու տարանջատված չլինի, արցախցին ոչ մի բանով տարբեր չէ տավուշեցուց, շեշտադրումը պետք է լինի ոչ թե Արցախը, այլ հայությունը:

Իմ պատկերացմամբ՝ Արցախյան խնդիրը պետությունից պետք է տեղափոխեն մարդուն: Արցախցիները այսօր տանն են ու այստեղ են տանտիրոջ իրավունքով, օտար ու տարբեր լինելու զգացում չպետք է մտցվի, մեր ամբողջ ջանքերը ուղղված են լինելու սրանք վերացնելուն»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ⇨ ԿՏԱՐՎԻ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ

Ավիաաղետի հետեւանքով՝ Իրանի նախագահ Էբրահիմ Ռաիսիի, արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի եւ այլ պաշտոնյաների մահվան հետաքննությունը կտարվի մինչեւ վերջ: LIVE-ի եթերում հայտարարել է Ռուսաստանում Իրանի դեսպան Քազեմ Ջալալին:

«Մեր բոլոր ղեկավարներն իրենց ջանքերը կենտրոնացրել են հուղարկավորության արարողությունն իրականացնելու համար, բնականաբար մենք ավարտին կհասցնենք հետաքննությունը: Անկասկած, Իրանի Իսլամական Հանրապետությունը եւ համապատասխան նախարարություններն ու իշխանությունները հետաքննություն են սկսել, եւ, իհարկե, նրանք կունենան հստակ զեկույց, եւ այս զեկույցը կհանձնվի Գերագույն առաջնորդին, ինչպես նաեւ Իրանի ժողովրդին», - ասել է Ջալալին:

Իրանի դեսպանը նաեւ վստահեցրել է, որ Թեհրանի արտաքին քաղաքականությունը չի փոխվի: Նրա խոսքով՝ այդ ոլորտը գտնվում է Գերագույն առաջնորդի իրավասության ներքո:

Մայիսի 20-ին դեսպանը հայտարարել է, որ ոչինչ չգիտի նախագահի ուղղաթիռի դեմ «ահաբեկչական հարձակման» վարկածի մասին:

Հիշեցնենք՝ Իրանի նախագահական ուղղաթիռը մայիսի 19-ին, կոշտ վայրէջք է կատարել Իրանի Արեւելյան Ադրբեջան նահանգում, ինչի հետեւանքով ուղղաթիռի անձնակազմն ու բոլոր ուղեւորները, այդ թվում՝ երկրի նախագահ Էբրահիմ Ռաիսին ու ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը զոհվել են:

ՎԱՅՐ Է ԴՐԵԼ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փարաքար համայնքի ավագանու անդամ Էմին Երիցյանը սոցցանցի իկր էջում գրում է.

«Հարգելի՛ բարեկամներ,

Փարաքար համայնքի հարգելի բնակիչներ,

Տեղեկացնում եմ, որ դեռեւս մեկ շաբաթ առաջ վայր եմ դրել համայնքի ավագանու «Դավիթ Մինասյան» խմբակցության ղեկավարի լիազորություններս՝ միաժամանակ, դադարեցնելով խմբակցությանն իմ անդամակցությունը:

Ավագանու իմ գործունեությունը շարունակում եմ խմբակցությունից դուրս՝ գործելով անհատական պատասխանատվության տիրույթում, ավելի անկաշկանդ եւ ակտիվ՝ հանուն համայնքի զարգացման:

Որակական փոփոխությունների հասնելու ջանքերը հաջողություն չեն արձանագրել, ուստի խմբակցությունից դուրս ավագանու կարգավիճակով տեսնում եմ փոփոխությունների հասնելու հնարավորություններ:

Թե՛ ավագանին, թե՛ համայնքապետարանն էապես պետք է բարելավեն իրենց աշխատանքի որակը, ինչը հնարավոր է միայն բոլոր ավագանիների, աշխատակազմի ներդաշնակ ու ներգրավված աշխատանքով, համայնքի բնակիչների ակտիվ մասնակցությամբ»:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՈՍՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 16-ին՝ ժամը 22:55-ին, ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն «Արտաշատ» բժշկական կենտրոնից հաղորդում էր ստացվել, որ շտաղ օգնության խումբը «թոքի հրազենային վնասվածք» ախտորոշմամբ երիտասարդի է բուժօգնության տեղափոխում:

Ժամը 23:00-ին ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնից Արտաշատի բաժին երկրորդ հաղորդումն է ստացվել. ՊԾ կարգախմբից հայտնում էին, որ Ոստան գյուղում հրազենային վնասվածքով տղամարդու դիակ կա:

Արտաշատի բաժնից մեկնած օպերատիվ խումբը պարզել էր, որ հրազենային վնասվածքով հիվանդանոց տեղափոխված անձը Ոստան գյուղի 24-ամյա բնակիչ է, իսկ սպանվածը Արտաշատ քաղաքի բնակիչ 27-ամյա Վահագն Վարդանյանն է: Պարզվել է նաեւ, որ դեպքը տեղի էր ունեցել Ոստան գյուղի գերեզմանատան հարակից տարածքում:

Արարատի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվեց քրեական վարույթ՝ քրեական օրենսգրքի հինգ հոդվածների հատկանիշներով:

Հանցագործությունը բացահայտվեց քրեական ոստիկանության գլխավոր վարչության, Արարատի մարզային վարչության, Արտաշատի, Արարատի, Տաշիրի բաժինների եւ Արարատի մարզային քննչական վարչության ծառայողների համատեղ ձեռնարկած անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում:

Պարզվել է, որ մայիսի 16-ին Արտաշատ քաղաքի շուկայի տարածքում գտնվող հացի փռում Ոստան գյուղի բնակիչ 24-ամյա երիտասարդը բարեւելու հարցի շուրջ վիճաբանության է բռնվել 30-ամյա համագյուղացու հետ: Հետագա պարզաբանումների համար ժամը 22:30-ին մի կողմից՝ 30-ամյա երիտասարդն իր ՎԱԶ-2106 մեքենայով, 35-ամյա հորեղբորորդու հետ, մյուս կողմից՝ 24-ամյա երիտասարդն իր ՎԱԶ-2121-ով, չորս համագյուղացիներով, այդ թվում՝ 27-ամյա երիտասարդը, որը հետագայում սպանվել էր, հանդիպում են գյուղի գերեզմանատան հարակից՝ էլցանցի ենթակայանին կից տարածքում: 24-ամյա երիտասարդը, իջնելով մեքենայից, իր մոտ ապօրինի պահվող որսորդական հրացանից կրակում է 30-ամյա համագյուղացու ուղղությամբ՝ պատճառելով վնասվածքներ, ինչին ի պատասխան՝ վերջինիս 35-ամյա հորեղբորորդին իր մոտ ապօրինի պահվող ատրճանակից կրակում եւ մարմնական վնասվածքներ է պատճառում նրան եւ 27-ամյա Վահագն Վարդանյանին՝ վերջինիս պատճառելով կյանքի հետ անհամատեղելի վնասվածք:

Հետագա ձեռնարկված միջոցառումների արդյունքում երկրի սահմանը լքել պատրաստվող 35-ամյա տղամարդը մայիսի 17-ին՝ ժամը 6:45-ին, Գոգավանի մաքսային անցակետում հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Արտաշատի բաժին, ապա ներկայացվել է մարզային քննչական վարչություն: Նա կալանավորվել է: Ձերբակալվել է նաեւ 24-ամյա երիտասարդը: Հայտնաբերվել եւ մարզային քննչական վարչություն են ներկայացվել նաեւ երկու մասնակից:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել են տրանսպորտային միջոցները, մահակ, 9 մմ տրամաչափի պարկուճ, 12 մմ տրամաչափի որսորդական հրացանի 4 պարկուճ, 12 մմ տրամաչափի 3 փամփուշտ եւ արնանման հետքեր:

Նշանակվել են դատաբժշկական, դատաձգաբանական եւ դատահետքաբանական փորձաքննություններ:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ հանցագործության գործիք հրազենները եւ 30-ամյա երիտասարդին հայտնաբերելու ուղղությամբ:

Կատարվում է նախաքննություն: Հանգամանքները պարզվում են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ, ԱՄՆ թմրանյութերի դեմ պայքարի եւ իրավապահ հարցերով միջազգային բյուրոյի քարտուղարի տեղակալ Բրենդոն Յոդերին, որին ուղեկցել են ԱՄՆ թմրանյութերի դեմ պայքարի եւ իրավապահ հարցերով միջազգային բյուրոյի Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի թիմի ղեկավար Մարի Կուրթը եւ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության (ԹԻՀ) գրասենյակի տնօրեն Ալեքսիս Հաֆֆվանին:

Ողջունելով հյուրերին՝ Արգիշտի Քյարամյանը բարձր է գնահատել ՀՀ քննչական կոմիտեի եւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան, մասնավորապես՝ԹԻՀ գրասենյակի միջեւ ծավալված համագործակցությունը: Դրա շրջանակներում իրականացված վերապատրաստման ծրագրերը դրական մեծ ազդեցություն են ունեցել ՀՀ ՔԿ մարդկային ռեսուրսների մասնագիտական զարգացման վրա, իսկ ցուցաբերված տեխնիկական, ծրագրային, մեթոդական աջակցությունը նպաստել է քննչական մարմնի գործունեության շարունակական լավարկմանը: ԱՄՆ իրավապահ մարմինների հետ գործակցության սերտացման տեսանկյունից ընդգծելով մեկ տարվա ընթացքում ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի հետաքննությունների դաշնային բյուրոյի (ՀԴԲ) եւ ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի թմրամիջոցների դեմ պայքարի վարչության հետ ստորագրված համագործակցության հուշագրերի կարեւոր նշանակությունը՝ Քյարամյանը վերահաստատել է համագործակցությունն ավելի խորացնելու՝ քննչական կոմիտեի պատրաստակամությունը:

ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Բրենդոն Յոդերը եւս բարձր է գնահատել փոխվստահության, համագործակցության մակարդակն ու որակը: Նա ողջունել է պրոֆեսիոնալիզմի եւ արդյունավետության բարձրացմանը, ներուժի արդիականացմանը եւ ինստիտուցիոն հզորացմանը միտված՝ ՀՀ քննչական կոմիտեում իրականացվող բարեփոխումները: Պարոն Յոդերը նաեւ նշել է, որ այդ ուղղություններով, ՀՀ քննչական կոմիտեի կարիքների հիման վրա, փոխգործակցության ընդլայնման նոր հնարավորություններ կան:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ ՔԿ կարողությունների զարգացմանը, ինչպես նաեւ անդրազգային բնույթի առանձին հանցագործությունների, մասնավորապես՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, կիբերհանցագործությունների, փողերի լվացման, եւ գենդերային հիմքով բռնությունների դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված հնարավորությունները:

ԼՈՒՐԵՐ

ԳՈՐԾԱԴՈՒԼԻՆ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ

Երեկ՝ մայիսի 21-ին, տեղի է ունեցել փաստաբանների գործադուլ՝ ի նշան փաստաբանությանը վերաբերող օրենսդրական խայտառակ փոփոխությունների դեմ բողոքի: «Ի թիվս այլ անընդունելի «չարեփոխումների»՝ իշխող ուժը ցանկանում է հարկ սահմանել փաստաբանների կողմից անվճար ծառայությունների մատուցման վրա: Դա լրացուցիչ խոչընդոտ կստեղծի քաղաքական ճնշումների ենթարկվող մեր հայրենակիցներին անշահախնդիր իրավական օգնության կազմակերպման համար: Ամբողջությամբ կիսելով թե՛ գործադուլի նպատակը եւ թե՛ ընտրված միջոցը՝ մենք հայտարարում ենք, որ գործադուլին միանալու ենք մասնակիորեն: Բացառություն են կազմելու քաղբանտարկյալների ու քաղաքական ճնշումների ենթարկվող այլ անձանց գործերը, որոնցով մենք չենք հրաժարվելու աշխատանքից»: Նշել է «Հինգ իրավապաշտպանների» նախաձեռնությունը:

ՄԻՔՆՈՐԴԵՑ՝ ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԵՑՆԵԼՈՒ

Նարեկ Սամսոնյանի ու Վազգեն Սաղաթելյանի գործով նախնական դատալսումների ընթացքում մեղադրող կողմը միջնորդեց երկու ամսով երկարաձգելու նրանց կալանքի ժամկետը:

Մեղադրողը Վազգեն Սաղաթելյանի դեպքում մասնավարոպես նշեց, որ բարձր է փախուստի հավանականությունը, քանի որ նա ՌԴ քաղաքացի է: Մեղադրողը նշեց, որ կալանքի իրավաչափությունը թե՛ Սամսոնյանի, թե՛ Սաղաթելյանի դեպքում առկա է: Պաշտպանական կողմի ներկայացուցիչ, Սամսոնյանի փաստաբան Ռուբեն Մելիքյանը նշեց, որ իր պաշտպանյալին վերագրում են մի արարք, երբ մի քանի ամիս առաջ որեւէ մեկը չգիտեր, որ դա հանցագործություն է:

«Հիմքեր կան պնդելու, որ այն օրից, երբ մեր երկրում ապաքրեականացվեց վիրավորանքը, քաղաքական խոսք արտահայտելիս կոշտ քննադատություն իրականացնելը քրեական իրավունքի տեսակետից լիովին թույլատրելի վարքագիծ է», - ասաց Մելիքյանը:

Նարեկ Մալյանն ու Վազգեն Սաղաթելյանը ազատ արձակվեցին:

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ

Ոստիկանության Ճամբարակի բաժնի քրեական հետախույզները ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մայիսի 20-ին Կոտայքի մարզի Գառնի գյուղի Մուրադյան Եղբայրների փողոցում հայտնաբերել եւ բաժին են տեղափոխել 42-ամյա Ծովինար Ս. -ին: Նա հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի (Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը) մեղադրանքով:

Ծովինար Ս.-ն ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին: Խափանման միջոցը՝ բացակայելու արգելք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 20-ից 21-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 101 դեպք, որոնցից 13-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽԱՆՈՒԹԻ ԶԵՂՉԵՐ՝ ՀԱՆՁՆՄԱՆ ՖՈՆԻՆ

Մայիսի 17-ին Իջեւանի շուկայի տարածքում գործող «Ֆրեշ» սուպերմարկետը սննդամթերքի գների զեղչեր էր հայտարարել: Իջեւան քաղաքի բնակիչների վկայությամբ՝ այդ սուպերմարկետը պարբերաբար մթերքների գների զեղչեր է հայտարարում, ինչը խթանում է հանրախանութի վաճառքի ցուցանիշները: Իջեւանցիների խոսքերով՝ զեղչերի պատճառով այդ օրը՝ առավոտից մինչ իրիկուն, «Ֆրեշ» սուպերմարկետում անընդհատ հերթ էր: Հազարավոր իջեւանցիներ շտապում էին զեղչով մթերքներ գնել: Իջեւան համայնքի Կիրանց գյուղը Իջեւան քաղաքից մոտ 25 կմ է հեռու: Կիրանցում սահմանազատման անվան տակ տարածքներ, գյուղի տներ են հանձնվում Ադրբեջանին, Կիրանցի բնակչությունը համառորեն պայքարում է, պայքարի այս բազում օրերի ընթացքում 20 հազար բնակիչ ունեցող Իջեւան քաղաքից Կիրանցի բնակիչներին սատարելու համար գոնե 50-100 մարդ Կիրանց չի գնացել:

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ, ՆՈՐ ԿԱՄՈՒՐՋ

Մայիսի 20-ի առավոտյան Կիրանցում սահմանային սյուներ են տեղադրվել: Կիրանցի վարչական ղեկավար Կամո Շահինյանն ասաց, որ Ադրբեջանին են անցնելու Միեր Սիմոնյանի, Խանում Թամրազյանի տները, ավտովերանորոգման գործող կետ, 3 վագոն-տնակ, նորակառույց դպրոցը հայտնվելու է ադրբեջանական սահմանապահներին շատ մոտ: Կ. Շահինյանն ասաց, որ բոլոր այդ տների եւ օբյեկտների համար առկա են կադաստրից ստացած սեփականության վկայականներ: Նոր սահմանը անցնելու է Կիրանցի 7-8 առանձնատների կողքով. այդ տներում բնակվելն անհնար է լինելու: Կ. Շահինյանը գյուղի բնակիչների վիճակը բնութագրեց կարճ. «Մեռած ենք, թաղած չենք»: Միակողմանի սահմանազատման հետեւանքով միջպետական ավտոճանապարհի Կիրանցի կամուրջն անցնելու է Ադրբեջանին, Կիրանց շինտեխնիկա են տարել, գյուղից ներքեւ եւ Աճարկուտ գյուղի կողմից այժմ այլընտրանքային ավտոճանապարհ են բացում, գետի վրա նոր կամուրջ են կառուցելու:

ԱՆՏԵՂՅԱ՞Կ Է, ԹԵ՞ ԹԱՔՑՆՈՒՄ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարց ենք ուղարկել՝ ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը սկսվելուց հետո՝ մինչեւ այժմ, Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների քանի՞ ուսուցիչ է մասնակցել դրան, նրանցից քանի՞սը ի՞նչ արդյունքներ են ունեցել: Մարզետը հերթական անգամ չի հայտնել իր ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցների այն ուսուցիչների թիվը, որոնք մասնակցել են կամավոր ատեստավորմանը: Նա պատասխանել է. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը չունի տեղեկատվություն, թե քանի ուսուցիչ է ներկայացրել հայտ՝ մասնակցելու կամավոր ատեստավորմանը, քանի որ այդ գործընթացը պարտադիր գործընթաց չէ (կամավորության սկզբունքով է), իսկ արդյունքների վերաբերյալ նախկինում տրամադրել ենք տեղեկատվություն. կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների թվի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել ԳԹԿ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԱՑԱՐԱՆ՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐ

«Կանանց կենտրոն. Շուշի» ՀԿ-ն վերջերս այց է կատարել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար Մասիս քաղաքում գործող կացարաններից մեկը: Այցի արդյունքում արձանագրվել են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների ապահովման խնդիրներ:

Ստորեւ ներկայացնում ենք ՀԿ-ի հայտարարությունը.

«2023 թ.-ին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք մինչ օրս բախվում են արժանապատիվ կացարանով ապահովված լինելու խնդրին:

Կացարանի իրավունքը սերտորեն կապված է մարդու արժանապատվության, նրա հիմնարար իրավունքների եւ ազատությունների հետ:

Իրենց տները ստիպված լքած անձինք Հայաստանում հայտնվել են ծայրահեղ ծանր եւ արժանապատվության հետ անհամատեղելի պայմաններում: Ոմանք գտել են ժամանակավոր բնակարան, սակայն առավել խոցելի խմբերը մինչ այժմ բնակվում են պետական եւ ոչ պետական միջոցների հաշվին գործող կացարաններում:

Բռնի տեղահանված անձինք այսօր ստիպված են լինելու լքել այդ կացարանները՝ չունենալով ապրուստի միջոց եւ ապրելու տեղ:

Այսպես, Արարարատ մարզի Մասիս քաղաքի 4-րդ մանկապարտեզում ապաստան գտած Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանցից պահանջում են լքել կացարանը, քանի որ այն պետք է հիմնովին քանդվի եւ հետագայում շահագործվի որպես մանկապարտեզ:

2023 թ. սեպտեմբերից մանկապարտեզը ծառայել է որպես ժամանակավոր կացարան բռնի տեղահանված անձանց համար, չնայած, որ շենքը եղել է վթարային:

Մանկապարտեզում բնակվում է 29 անձ (15 ընտանիք), որոնցից 1-ն ունի հաշմանդամություն, 7-ը միայնակ են, 7-ը՝ տարեց եւ 4-ը՝ երեխա:

Պետությունը պարտավորություն ունի երաշխավորելու բռնի տեղահանված անձանց իրավունքները՝ ապրելու արժանապատիվ պայմաններում, օգտվելու կացարանից, որը կբավարարի անձի հիմնական եւ հատուկ կարիքները:

Առաջնահերթ պետք է հաշվի առնել բռնի տեղահանված անձանց հատուկ կարիքները, հատկապես կանանց եւ երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, որոնք խոցելիության պատճառով բախվում են լրացուցիչ դժվարությունների եւ խոչընդոտների՝ ապահովելու իրենց կենսական պայմանները:

Նվազագույն կենսական պայմանների բացակայությունը կարող է խաթարել անձի ֆիզիկական եւ հոգեկան առողջությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կացության իրավունքը համարել է անձի ամենահիմնական կարիքը, ինչից զրկելը կարող է հանգեցնել մարդու արժանապատվության հետ անհամատեղելի վատթարացման վիճակի:

Հետեւաբար, պահանջում ենք ՀՀ կառավարությունից ապահովել Արարարատ մարզի Մասիս քաղաքի 4-րդ մանկապարտեզում ժամանակավոր բնակություն հաստատած բռնի տեղահանված անձանց անվտանգ եւ նրանց կարիքներին համապատասխան կացարանով:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը հանդես է եկել որպես Շառլ Ազնավուրի 100-ամյակին նվիրված համերգի գլխավոր հովանավոր Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում: Բանկի աջակցությամբ տեղի ունեցավ համերգ՝ նվիրված Շառլ Ազնավուրի հարյուրամյակին: Ծրագրում ընդգրկված էին արտիստի երգացանկի լավագույն ստեղծագործությունները՝ OG վոկալային խմբի մեներգչուհիների կատարմամբ:

Միջոցառման հյուրերն էին Շառլ Ազնավուր հիմնադրամի ներկայացուցիչները, կառավարության անդամներ եւ մշակույթի անվանի գործիչներ:

«Ազնավուրն ամբողջ աշխարհի համար մի ամբողջ դարաշրջանի խորհրդանիշ է: Այս տարի աշխարհահռչակ ֆրանսահայ շանսոնյեի հարյուրամյակին նվիրված միջոցառումներ են անցկացվում բազմաթիվ երկրներում: Ազնավուրը մեր ժողովրդի համար միշտ եղել է եւ կլինի առանձնահատուկ հպարտություն: Ուրախ ենք, որ կարողացանք մասնակցություն ունենալ այս հիշարժան օրվան», - նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրեն - Տնօրինության նախագահ Արա Ավագյանը:

«Սա առաջին համերգը չէ, որ մենք նվիրում ենք Շառլ Ազնավուրին: Այս տարի մենք փորձեցինք վերստեղծել վիրտուալ ճամփորդության մթնոլորտ՝ լեգենդար երաժշտի բազմամյա ստեղծագործական կյանքով: Մենք շնորհակալ ենք «ՎՏԲ-Հայաստան» բանկին, որն աջակցեց մեզ նման կարեւոր ծրագրի իրականացման գործում: Շնորհակալություն ենք հայտնում նաեւ մեր ունկնդիրներին, որոնք համերգի ողջ ընթացքում հուզմունքով վերապրեցին մեծն երգչի յուրաքանչյուր ստեղծագործությունը», - նշեց OG վոկալային խմբի գեղարվեստական ղեկավար, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Նաիրա Գյուրջինյանը:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հայաստանում 2-րդ անգամ անցկացվել է Չինաստանի առաջատար համալսարանների ցուցահանդեսը: Ցուցահանդեսը կազմակերպվել էր «Չինաստանի միջազգային թեստավորում» (Chinese Testing International) ՍՊԸ-ի կողմից եւ իրականացվում էր «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի Կոնֆուցիուսի ինստիտուտի կողմից: Միջոցառման նպատակն էր խթանել փոխանակումներն ու համագործակցությունը կրթության ոլորտում: Այս տարի ցուցահանդեսին մասնակցում էին 20 առաջատար չինական բուհեր:

Միջոցառման բացման արարողությանը մասնակցել են ՀՀ-ում ՉԺՀ արտակարգ եւ Լիազոր դեսպան Ֆան Յոնը, «Չինաստանի միջազգային թեստավորում» կենտրոնի ղեկավարը, Բրյուսովի պետական համալսարանի ռեկտոր Դավիթ Գյուրջինյանը եւ այլ պատվավոր հյուրեր:

Իր ողջույնի խոսքում դեսպան Ֆան Յոնը նշել է, որ շատ հաճելի է ցուցահանդեսին տեսնել բազմաթիվ հայ երիտասարդ ուսանողների, որոնք հետաքրքրություն են ցուցաբերում չինարեն ուսումնասիրելու եւ Չինաստանում ուսում ստանալու հանդեպ:

Ցուցահադեսին մասնակցել են շուրջ 2000 աշակերտներ եւ ուսանողներ, որոնք ստացել են իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, ծանոթացել բուհերի երկարաժամկետ եւ կարճաժամկետ ծրագրերին:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 6 պատահար. 8 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ «ԲՈՀԵՄ» ԹԱՏՐՈՆԻՆ

«Ֆասթ բանկը», որպես սոցիալապես պատասխանատու ընկերություն, շարունակում է դիտարկել Հայաստանի մշակութային ոլորտի խնդիրները, աջակցել դրանց լուծմանը: Կարեւորելով մշակութային վայրերին աջակցելը՝ «Ֆասթ բանկն» ստանձնել էր «Բոհեմ» թատրոնի ենթակառուցվածքների վերանորոգման, արդիականացման գործընթացը:

Թատրոնի սանհանգույցների վերանորոգումն իրականացվել է հայկական ոճով, օգտագործվել են հայկական քարեր: «Բոհեմ» թատրոնի պրոդյուսեր Քրիստինա Հովհաննիսյանը «Ֆասթ բանկի» ներդրումն ու աջակցությունը շատ է կարեւորում. «Շատ ուրախ ենք, որ «Ֆասթ բանկն» օգնեց եւ սանհանգույցները վերանորոգվեցին: Հատկապես, որ մասնավոր թատրոնին օգնություն է տրվել: Ուզում ենք մեր շնորհակալությունը հայտնել, որ այսօր ունենք լավ վերանորոգված սանհանգույց, որը մեր հանդիսատեսին բավականին կգոհացնի»:

«Բոհեմ» թատրոնը գործում է 2016 թվականի սեպտեմբերից Հայաստանի Գրողների միության շենքում: Թատրոնի անվան հիմքում Փարիզում 1989 թվականին Նարեկ Դուրյանի հիմնած «Բոհեմ թատերախումբ» միությունն է: Թատրոնի խաղացանկը մշտապես թարմացվում է: «Մորաքույրը Փարիզից», «Սե լա վի», «Շեղշե լա ֆամ» սիրված ներկայացումներին ավելանում են նոր բեմադրություններ:

Fastex–Ը՝ «ԲԱՆՈՒԳՈՐԾ»–Ի ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Մայիսի 16-ին ԵՊՀ-ի տարածքում տեղի է ունեցել «ԲանՈՒԳործ» ԵՊՀ էքսպո-2024»-ը: Միջոցառման գլխավոր գործընկերը Fastex-ն էր: «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2024»-ի գործընկեր դառնալու նպատակն էր խթանել ՀՀ-ում կրթության եւ գիտության, մասնավորապես՝ բլոկչեյնի եւ թվային ակտիվների ոլորտի զարգացումը:

«ԲանՈՒԳործ» էքսպոյի շրջանակում հայաստանյան առաջատար ընկերությունները ներկայացրել են իրենց պրոդուկտներն ու ծառայությունները:

Fastex-ի տաղավարում միջոցառման այցելուները մասնակցել են բլոկչեյնի վրա գործող հատուկ խաղարկությանը:

Fastex-ի աշխատակիցները ներկայացրել են նաեւ էկոհամակարգի հնարավորությունները եւ անդրադարձել Fastex Exchange եւ Fastex Wallet հավելվածների տեխնիկական հնարավորություններին, իսկ տաղանդների կառավարման եւ ներգրավման բաժնի մասնագետները կիսվել են ընկերության ազատ հաստիքների մասին տեղեկությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Հովհաննես Սոլակյանս, Կիլիկիա թաղամասում անցյալ շաբաթ կորցրել եմ 1979 թվականին տրված թիվ 14 ուսումնարանի դիպլոմս: Գտնողին խնդրում եմ զանգահարել 095 566 277 հեռախոսահամարով:

ԵՐԿՐՈՐԴ ՏՐԱՆՇ

ՄՓՄՁ–ՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

2024 թվականի մայիսի 16-ին Երեւանում կայացած ՎԶԵԲ 33-րդ գործնական համաժողովի շրջանակում «Արդշինբանկը», Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի («ՎԶԵԲ») ու Եվրոպական միության («ԵՄ») հետ համագործակցությամբ կնքեց երկրորդ տրանշը ստանալու պայմանագիրը, որով հնարավորություն կունենա վարկ տրամադրել միկրո, փոքր եւ միջին ձեռնարկություններին: Այս վարկավորումն իրականացվում է «Արեւելյան գործընկերությունում (EaP SMEC) ՄՓՄՁ մրցունակության ծրագրի» շրջանակում:

Ըստ կնքված պայմանագրի՝ «Արդշինբանկի» վարկավորումն աջակցելու է ՄՓՄՁ-ների կողմից կատարվող ներդրումներին կայուն տեխնոլոգիաների, ինչպես նաեւ առողջության եւ անվտանգության ուղղությամբ: Ակնկալվում է, որ բոլոր ֆինանսավորվող ենթավարկերը կհամապատասխանեն ՎԶԵԲ-ի Կանաչ տնտեսության անցումային («GET») մոտեցմանը: Բացի երկարաժամկետ ֆինանսավորումից, ենթավարկառուները կստանան նաեւ դրամաշնորհներ՝ իրենց ներդրումային ծրագրերի հաջող ավարտից հետո:

«Հայաստանի ամենամեծ բանկի հետ պայմանագրի կնքումը լավագույն տարբերակն է ՎԶԵԲ 33-րդ գործնական համաժողովի ավարտն ազդարարելու համար: Այս համագործակցությունը երկու ֆինանսական ինստիտուտների եւ Եվրամիության միջեւ ես համարում եմ ստացված եւ անչափ ուրախ եմ այդ առիթով, քանի որ ՄՓՄՁ վարկավորումը կնպաստի այդ սեկտորում մրցունակության բարձրացմանը, հատկապես՝ մարզերում գործող բիզնեսների դեպքում»,- իր խոսքում նշեց ֆինանսական հաստատությունների գծով ՎԶԵԲ-ի գործադիր տնօրեն Ֆրենսիս Մալիժը:

«Արդշինբանկի» վարչության նախագահ Արտակ Անանյանը շնորհակալություն հայտնեց ՎԶԵԲ-ին եւ Եվրամիությանն արդյունավետ համագործակցության եւ «Արդշինբանկին» վստահելու համար՝ մասնավորապես նշելով. «Մեզ համար մեծ պատիվ եւ պատասխանատվություն էր ստանձնել ՎԶԵԲ 33-րդ գործնական համաժողովի ռազմավարական գործընկերությունը եւ շարունակել համագործակցությունը Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի ու Եվրամիության հետ: ՄՓՄՁ հատվածը չափազանց կարեւոր է Հայաստանի տնտեսության զարգացման, արտահանման առաջխաղացման եւ աշխատատեղերի ստեղծման համար: Մեր լայնամասշտաբ տարածաշրջանային ցանցի շնորհիվ այս միջոցների զգալի մասը ռազմավարական իմաստով կուղղվի շատ շրջաններում ՄՓՄՁ-ների ուժեղացմանը»:

«Արդշինբանկը» Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ «փրայվիթ բանկինգի» ու ակտիվների կառավարման ոլորտներում: «Արդշինբանկն» ունի ավելի քան 380.000 հաճախորդ, որոնց սպասարկում են բանկի 1.700-ից ավելի աշխատակիցներ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 65 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ եւ օնլայն բանկինգի համակարգերով: Բանկն ունի երկրում ամենալայն մասնաճյուղային ցանցը, ինչպես նաեւ ներկայացուցչություն՝ Փարիզում:

«Արդշինբանկը» Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

ՎԶԵԲ-ը հիմնադրվել է 1991 թվականին եւ ունի 39 անդամ երկիր Միջին Եվրոպայից մինչեւ Միջին Ասիա:

Բանկի առաքելությունը հետխորհրդային ազդեցության երկրներին իրենց մասնավոր հատվածները հաստատելու աջակցությունն է:

Հայաստանը ՎԶԵԲ-ի անդամ է դարձել 1992 թվականի դեկտեմբերի 7-ին եւ ՎԶԵԲ-ի կապիտալում վերջինիս բաժնեմասը կազմում է 10 մլն եվրո:

ՎԶԵԲ-ի հետ համագործակցության հիմնական ոլորտներն են էներգետիկան, տրանսպորտը, ֆինանսական հատվածը:

ԿԻԲԵՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՍՊԵՐՍԿԻԻ» ԴԱՍԸՆԹԱՑԸ՝ ԻՆՏԵՐՊՈԼԻ ՀԱՄԱՐ

«Կասպերսկի» ընկերությունն Ինտերպոլի աշխատակիցների համար անցկացրել է կիբերանվտանգության փորձագիտական առցանց թրեյնինգների շարք: Բոլոր դասընթացները հեղինակել են իրենց ոլորտի պրակտիկ փորձագետները, այդ թվում՝ Սպառնալիքների հետազոտությունների եւ վերլուծության գլոբալ կենտրոնի (GReAT) եւ Կիբերմիջադեպերին արձագանքման գլոբալ թիմի (Kaspersky Global Emergency Response Team – GERT) մասնագետները:

Ընկերությունը հայտնում է, որ 2023-ի սեպտեմբեր-դեկտեմբերին Ինտերպոլի աշխատակիցներն անցել են «Ռեվերս-ինժինիրինգ 101», «Թիրախավորված վնասաբեր ԾԱ-ի ռեվերս ինժիներինգ» եւ «Արձագանք Windows-ում միջադեպերին» թրեյնինգները՝ «Կասպերսկի» ընկերության եւ Ինտերպոլի միջեւ 2019-ին ստորագրված համագործակցության համաձայնագրի շրջանակում: Ուսուցումն ուղեկցվում էր GReAT-ի եւ GERT-ի փորձագետների հետ հարցուպատասխանի նիստերով: Ամբողջ դասընթացը կառուցվել է վիրտուալ լաբորատորիայում՝ անվտանգ օնլայն տարածքում պարապմունքների վրա:

Ինտերպոլի աշխատակիցների շրջանում ամենասիրված թրեյնինգը դարձել է «Թիրախավորված վնասաբեր ԾԱ-ի ռեվերս ինժիներինգ»-ը: Դրա ընթացքում նրանք սովորում էին վերլուծել իրական վնասաբեր ԾԱ-ն, իրականացնել վնասաբեր փաստաթղթերի եւ էքսպլոյտների ռեվերս ինժիներինգ, ինչպես նաեւ ուսումնասիրել են «ռեվերս ինժիներինգի» գործիքների ընդլայնված հնարավորությունները:

«Ռեվերս ինժիներինգ 101» թրեյնինգում հիմնական ուշադրությունը դարձվել է ասեմբլերի եւ Go լեզուների հիմունքներին, ինչպես նաեւ այն բանին, թե ինչպես իրականացնել C++-ով գրված ծրագրերի «ռեվերս ինժիներինգ» եւ ինքնուրույն վերլուծել վարակի ողջ շղթան:

«Արձագանք Windows-ում միջադեպերին» թրեյնինգը նվիրված է այն բանին, թե ինչպես հայտնաբերել եւ արձագանքել միջադեպերին, վերլուծել վարակված սարքերը, ինչպես նաեւ հասկանալ գրոհների տարբեր մեթոդները, այդ թվում՝ տարբերակել APT գրոհները սպառնալիքների այլ տեսակներից:

«Կասպերսկի» ընկերության փորձագետները Ինտերպոլի իրավապահ մարմինների աշխատակիցների համար դասընթացներ են անցկացնում 2019-ից: Այս ընթացքում անցկացվել է ավելի քան տասը դասընթաց, ուսուցումը կշարունակվի 2024-ին:

«Կասպերսկի» ընկերության փորձագիտական առցանց թրեյնինգները ժողովրդականություն են վայելում աշխարհի բազմաթիվ կազմակերպությունների եւ գիտական ինստիտուտների շրջանում: Գործարկումից ի վեր դրանք անցել են 50 երկրների ավելի քան 2 հազար մասնագետներ: Առցանց հարթակը ներառում է 10 թրեյնինգ, որոնց շրջանակում փորձագետները կիսվում են իրենց փորձով եւ գիտելիքներով, այդ թվում՝ ռեվերս ինժիներինգի, սպառնալիքների հայտնաբերման, միջադեպերին արձագանքելու առաջատար մարտավարությունների եւ ռազմավարությունների մասին: Թրեյնինգները բաժանված են ըստ մակարդակների՝ կախված սովորողների պատրաստվածությունից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Նիդերլանդների թագավորության Հաագա քաղաքում օրերս անցկացվել է «Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության կոնվենցիայի» (Հաագա, 1954 թ.) 70-ամյակին նվիրված միջազգային համաժողով, որը կազմակերպել էին ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Նիդերլանդների թագավորությունը, ինչպես նաեւ միջազգային տարբեր կազմակերպություններ:

Համաժողովին մասնակցում էին տասնյակ երկրների պատվիրակներ, ժառանգության ուսումնասիրման ոլորտի տասնյակ կազմակերպություններ, փորձագետներ:

Համաժողովին մասնակցում էր նաեւ հայաստանյան պատվիրակությունը՝ ի դեմս ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Հարությունյանի եւ նախարարության մշակութային ժառանգության վարչության մշակութային ժառանգության պահպանության եւ զարգացման բաժնի պետ Գառնիկ Մոմջյանի:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը 2021-2023 թթ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ հաջողությամբ եւ բարձր մակարդակով իրականացրած «Համաշխարհային ժառանգության կառավարումը Հայաստանում» ծրագրի շնորհիվ հրավեր էր ստացել համաժողովի գլխավոր դահլիճի հարակից սրահում միջազգային նշանավոր կազմակերպությունների (ԻԿՕՄՕՍ, ԻԿՌՕՄ, ԻԿՕՆԵՄ, ԱԼԻՖ, Կապույտ վահան, Հոնկոնգի համալսարան) կողքին ունենալու իր առանձին տաղավարը, որտեղ երեք օր շարունակ ներկայացվել են գիտահետազոտական կենտրոնի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ ծրագիրը, հուշարձանների թվայնացման, եռաչափ մոդելավորման, ինչպես նաեւ նորագույն սարքավորումներով իրականացրած հետազոտական մյուս աշխատանքները, կրթական ծրագրեր եւ այլ նախագծեր: Հայկական տաղավար են այցելել տարբեր երկրների պատվիրակներ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների դեսպաններ, միջազգային հետազոտական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնցից մի քանիսի հետ ձեռք են բերվել առաջիկայում համատեղ նախագծեր իրականացնելու պայմանավորվածություններ:

Հայկական տաղավարում ներկայացվել է նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՀՀ ԱԳ նախարարության եւ Մաշտոցյան Մատենադարանի համատեղ իրականացրած՝ իրաքյան Էրբիլ քաղաքի ձեռագրական կենտրոնի ձեռագրերի թվայնացման եւ վերականգնման նախագիծը, որի արդյունքում Մատենադարանի աշխատակիցները փորձի փոխանակման եւ վերապատրաստման դասընթացներ են վարել Էրբիլի կենտրոնի աշխատակիցների համար:

Համաժողովի ընթացքում, ի թիվս տարբեր հարցերի, քննարկվել են նաեւ զինված հակամարտությունների պայմաններում մշակութային ժառանգության (նյութական եւ ոչ նյութական) պահպանության համար իրավական նոր մեխանիզմների անհրաժեշտությանն առնչվող հարցեր, ինչպես նաեւ նորագույն սարքավորումների դերն այդ գործում: Այս համատեքստում Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Խաչիկ Հարությունյանը ներկաներին հիշեցրել է ԼՂ պատմամշակութային ժառանգության ոչնչացման, բռնայուրացման դեպքերը, ինչպես նաեւ կարեւորել հնարավոր նոր մեխանիզմների անհրաժեշտությունը ԼՂ-ում հայկական (համամարդկային) ժառանգության մշտադիտարկման եւ պահպանության ուղղությամբ:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԹԱՏԵՐԱԽՄԲԵՐ՝ «ԵՐԵՎԱՆԻ ԲԱԼԵՏԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ»-ԻՆ

«Երեւանի բալետային փառատոն»-ը, որն անցկացվելու է հունիսի 2-5-ը Թումանյանի անվան զբոսայգում, արվեստասերներին հնարավորություն կտա ծանոթանալու տարբեր երկրներից Հայաստան ժամանած թատերախմբերի ներկայացումներին:

Երեւանի քաղաքապետարանը հայտնում է, որ բացօթյա բալետային փառատոնին հանդես կգան Բորիս Էյֆմանի Սանկտ Պետերբուրգի ակադեմիական բալետի թատրոնը, Թբիլիսիի Զ. Պալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի թատրոնը եւ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը:

«ԳԱՖԷՍՃԵԱՆ»-Ը՝ ՎԵՆԵՏԻԿԻ՝ ԲԻԵՆԱԼԵՈՒՄ

Վենետիկի 60-րդ հոբելյանական արվեստի բիենալեում Հայաստանի ազգային տաղավարի համակազմակերպիչ եւ գլխավոր հովանավոր «Գաֆէսճեան» արվեստի կենտրոնն (ԳԱԿ) իրականացրել է «Հոգի-ձայն-պատկեր» խորագրով կրթական ծրագիրը: Նման ձեւաչափը Հայաստանի պաշտոնական տաղավարում առաջին անգամ է կիրառվել:

Ծրագրի շրջանակում տեղի է ունեցել չորս հանդիպում՝ շուրջ 60 ուսանողի եւ այլ այցելուների ներգրավմամբ՝ հեղինակավոր կրթամշակութային հաստատություններից, այդ թվում՝ Եվրոպական մշակութային ակադեմիայից (European Cultural Academy - ECA), Տրենտոյի (NEST College & Campus Trento) եւ Վենետիկի Կա Ֆոսկարի (Universita Ca Foscari) համալսարաններից:

Ծրագրի առաջին մասում մասնակիցները ծանոթացել են Հայաստանի ազգային տաղավարը ներկայացնող փարիզաբնակ հայ արվեստագետ Նինա Խեմչյանի «Արձագանք» բազմաշերտ մուլտիմեդիա նախագծին, որը երեք բաղադրիչ ունի՝ «Յոթ մահացու մեղքեր», «Արձագանք» եւ «Կատարելություն»: Այնուհետ ստեղծագործական տարածքում մասնակիցները փորձ են արել ուսումնասիրելու ցուցադրության առանցքային մաս կազմող, Հասմիկ Բաղդասարյան- Ղոլուխանյանի կատարմամբ հնչող Մեսրոպ Մաշտոցի շարականների տեքստն ու երաժշտությունը: Նրանց տրամադրվել են շարականների թարգմանած տեքստերն ու լատինատառ տառադարձումներով հատուկ թռուցիկներ՝ ծանոթանալու շարականների բովանդակությանը, որոնցից մի քանիսը տեղում նույնիսկ երգվել են:

Շարունակելով հոգեւոր երաժշտության ունկնդրումը՝ մասնակիցները Նինա Խեմչյանի գնդաձեւ կավե քանդակների նմանությամբ շրջանաձեւ թղթերի վրա, տարբեր նյութերի օգնությամբ փորձել են արտահայտել հնչող երաժշտությունից ստացած իրենց տպավորություններն ու զգացմունքները:

Կրթական ծրագրերն իրականացրել է ԳԱԿ կրթության գծով տնօրեն Ելիզավետա Շիրինյանը: Ծրագրերին մասնակցում էին Հայաստանի ազգային տաղավարի համադրող, ԳԱԿ ցուցադրությունների գծով տնօրեն Արմեն Եսայանցը եւ անձամբ արվեստագետը՝ Նինա Խեմչյանը:

«Արձագանք» ցուցադրության եւ վերջինիս վրա հիմնված կրթական ծրագրի միջոցով մասնակիցներն առավել խորությամբ ծանոթացել են հայկական մշակույթին, ինչպես նաեւ ինքնաարտահայտվելու հնարավորություն ունեցել:

Կարեւորելով նման կրթական նախաձեռնությունները՝ թե՛ մասնակիցները, եւ թե՛ նրանց դասախոսները նշել են, որ նախկինում նման փորձառություն երբեք չեն ունեցել, եւ դասընթացները նոր հորիզոններ են բացել իրենց համար՝ Հայաստանի ազգային տաղավարի բոլոր շերտերն ընկալելու համար:

ՄԱՐԶԱԿԱՆ

4 ՆՈՐ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒՄ

Չորս նոր ֆուտբոլիստ է ընդգրկվել Բրազիլիայի հավաքականի՝Ամերիկայի գավաթի խաղարկության հայտացուցակում:

Հավաքականի գլխավոր մարզիչ Դորիվալ Ժունիորը թիմ է հրավիրել Թուրինի «Յուվենտուսի» պաշտպան Բրեմերին, պորտուգալական «Պորտուի» հարձակվող Պեպե Ակինոյին եւ Բերգամոյի «Ատալանտայի» կիսապաշտպան Էդերսոն Լոուրենսոյին: Վերջինս առաջին անգամ է հրավիրվում Բրազիլիայի հավաքական:

Բացի դրանից, վնասվածք ստացած «Մանչեսթեր Սիթիի» դարպասապահ Էդերսոնին փոխարինել է «Սան Պաուլոյից» Ռաֆայել Մոտնտեյրոն:

Հիշեցնենք, որ բրազիլացիների հայտացուցակից դուրս են մնացել հավաքականի պատմության լավագույն ռմբարկու Նեյմարը («Ալ Հիլալ», Սաուդյան Արաբիա), որը նախորդ տարվա հոկտեմբերից ապաքինվում է վնասվածքից, ինչպես նաեւ «Մանչեսթեր Յունայթեդի» կիսապաշտպան Կազեմիրոն:

Ամերիկայի գավաթի խաղարկությունն անցկացվելու է ԱՄՆ-ում հունիսի 21-ից հուլիսի 14-ը: Բրազիլիայի հավաքականը D խմբում մրցելու է Կոլումբիայի, Պարագվայի ու Կոստա Ռիկայի թիմերի դեմ:

ՀԱՂԹԱՆԱԿ՝ ՇԱՐԺԱՅԻ ՄՐՑԱՇԱՐԻ 7-ՐԴ ՏՈՒՐՈՒՄ

Հայաստանը ներկայացնող շախմատիստները շարունակում են ելույթները Շարժայի շախմատային մրցաշարում:

ԱՄԷ-ում ընթացող 7th Sharjah Masters 2024 միջազգային մրցաշարի 7-րդ տուրում Հայաստանի ներկայացուցիչներ Շանթ Սարգսյանը, Սամվել Տեր-Սահակյանը Մանուէլ Պետրոսյանը կիսել են միավորը, իսկ Հայկ Մարտիրոսյանը հաղթանակ է տոնել:

ԱՐՆԵ ՍԼՈԹԸ՝ «ԼԻՎԵՐՊՈՒԼԻ» ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉ

Անգլիական «Լիվերպուլը» հայտարարել է նիդերլանդցի Արնե Սլոթին թիմի նոր գլխավոր մարզիչ նշանակելու մասին: 45-ամյա մասնագետը աշխատանքը կսկսի հունիսի 1-ից:

Սլոթն անգլիական ակումբի գլխավոր մարզչի պաշտոնում կփոխարինի գերմանացի մասնագետ Յուրգեն Կլոպին, որը 9 տարի անց հեռացել է «Լիվերպուլից»:

Սլոթը 2021 թվականի հուլիսից գլխավորում էր Ռոտերդամի «Ֆեյենորդը»: Նախորդ մրցաշրջանում նրա գլխավորությամբ թիմը դարձել էր Նիդերլանդների չեմպիոն եւ այս մրցաշրջանում էլ նվաճել երկրի գավաթը: 2021/2022 մրցաշրջանում «Ֆեյենորդը» հասել էր Կոնֆերենցիաների լիգայի եզրափակիչ, որտեղ 0-1 հաշվով պարտվել էր իտալական «Ռոմային»:

● *Մայիսի 26-ին՝ ժամը 21:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա Սերգեյ Դանիելյանի «Էն Լոռու ձորն է» մոնոներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ դեռի ԵԱՏՄ եւ այլ երկրներ բուսական ծագման մթերքի արտահանման համար:

Լեռնիկ Յավրյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ արտահանվող թարմ պտուղ-բանջարեղենի խմբաքանակի մաքսային ձեւակերպումների համար անհրաժեշտ է ունենալ հետեւյալ փաստաթղթերը՝

1. արտահանման հաշիվ-ապրանքագիր, պայմանագիր.
արտահանման հաշիվ-ապրանքագրում նշվում են ապրանքն արտահանողի եւ ստացողի (ԵԱՏՄ անդամ երկրի ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անվանումները, հասցեները, ՀՎՀՀ-ն, ապրանքի նկարագիրը, քանակը, քաշը, արժեքը,
2. տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը - CMR
3. ապրանքների ձեռքբերման փաստաթուղթ, բացակայության դեպքում՝ փաստաթղթեր, որոնք հաստատում են ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքը,
4. ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից տրամադրվող անվտանգության կամ ֆիտոսանիտարական հավաստագիր, որը խմբաքանակի վերը նշված փաթեթավորման եւ մակնշման պահանջների ապահովման եւ կարանտին վնասակար օրգանիզմներից զերծ լինելու դեպքում տրամադրվում է արագացված ընթացակարգով՝ 20 րոպեում,
5. խմբաքանակի առեւտրային փաստաթղթերից որեւէ մեկի վրա անհրաժեշտ է նշել Товары Евразийского экономического союза՝ հաստատված հայտարարատուի (մատակարար կամ փոխադրող) կողմից,
6. ապրանք ստացող կողմը պարտադիր պետք է լինի ԵԱՏՄ անդամ երկրի ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր՝ համաձայն ԵԱՏՄ անդամ ներմուծող երկրի կողմից ներկայացված պահանջի:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այլ երկրներ արտահանելիս ներմուծող երկրի պահանջի դեպքում անհրաժեշտ է ունենալ նաեւ արտադրանքի ծագման երկրի հավաստագիր, որը տրամադրվում է ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատի կողմից առանց փորձաքննության, դիմումի ստացման օրվանից 1-օրյա ժամկետում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս վերադարձնել կամ վերաձեւակերպել սխալ կամ ավել վճարված գումարները:

Նվարդ Օհանյան (56 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ՀՀ պետական բյուջեի գանձապետական հաշիվներին սխալ վճարում եք կատարել կամ ավելին եք վճարել, գումարի վերադարձման կամ վերաձեւակերպման նպատակով կից դիմումի ձեւով կարող եք դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն: Դիմումին կից ֆիզիկական կամ իրավաբանական անձը ներկայացնում է վճարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակները, մասնավորապես՝ անդորրագիրն ու վճարման հանձնարարագիրը: Եթե վճարումը կատարված է պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով, ապա որպես վճարումը հաստատող փաստաթուղթ կարող է հանդիսանալ վճարումների պետական էլեկտրոնային համակարգի գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը, ինչպես նաեւ վճարված գումարը վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին գանձող մարմնի տեղեկանքը: Եթե չգիտեք, թե որ մարմինն է գանձում կատարել, ապա անհրաժեշտ է մուտք գործել կայքի գանձապետական հաշիվներ բաժինը, գտնել համապատասխան հաշվեհամարը, որին կից նշված է նաեւ հաշիվը տնօրինող մարմնի անվանումը:
Վերադարձման դեպքում դիմումում պետք է նշել նաեւ բանկային ռեկվիզիտները, այսինքն՝ այն բանկի եւ մասնաճյուղի անունը, որտեղից դիմողը պետք է ստանա վերադարձված գումարը եւ անձնագրի տվյալները /սերիան, ում կողմից է տրված, պատճենը/: Բանկային հաշվեհամարի առկայության դեպքում անձնագրի տվյալների ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վերաձեւակերպման դեպքում դիմումի մեջ պետք է նշել ճիշտ գանձապետական հաշվի համարը: Դիմողը 5-օրյա ժամկետում տեղեկացվում է գործարքը /գումարի վերադարձ կամ վերաձեւակերպում/ կատարված լինելու մասին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Մայիսի 21-ին Վենետիկում անցկացված բիենալեի ընթացքում, երբ հնչում էին Մաշտոցյան շարականները, մասնակիցները Նինա Խեմչյանի գնդաձեւ կավե քանդակների նմանությամբ շրջանաձեւ թղթերի վրա, տարբեր նյութերի օգնությամբ փորձում էին արտահայտել հնչող երաժշտությունից ստացած իրենց տպավորություններն ու զգացմունքները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 6 +14 + 18
Կոտայքի լեռներ	+ 2 + 6 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
Գեղարքունիք	+ 2 + 5 +13 + 17
Լոռի	+ 3 + 5 +13 + 16
Տավուշ	+ 7 + 10 +17 + 19
Արագածոտնի լեռներ	+ 2 + 4 +12 + 14
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 11 +19 + 23

Արարատ	+ 9 + 12 +22 + 24
Արմավիր	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +13 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +22 + 24
Սյունիքի հովիտներ	+ 8 + 12 +18 + 21
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +14 + 17
ԼՂՀ	+ 5 + 9 +14 + 16
Երեւան	+ 16+ 18 + 21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.5.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*